ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների մատուցման նպատակով ապրանքների ձեռքբերման համար կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 1-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հարգելի հանձնաժողով խնդրում ենք 1-րդ չափաբաժնի մասով պարզաբանել՝ եթե առաջարկվող Medtronic ֆիրմայի ապրանքատեսակը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել այն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը ունեցող ապրանքատեսակի կիրառման դեպքում համարժեք կդիտարկվի արդյոք ստորև նշված՝ դեղապատ ստենտի տեխ. բնութագրով ապրանքը, դեղը զոտարոլիմուս, իրենից ներկայացնում է շարունակական չընդհատվող սինուսային հյուսվածք որը հնարավորություն է տալիս խուսափել թե վիրահատության ժամանակ թե հետվիրահատական շրջանում ստենդի հետագա դեֆորմացիայից: Ստենտի նյութը՝ կոբալտ քրոմ, ստենտի նյութի հաստությունը ոչ ավել, քան՝ 0.091մմ, դեղանյութի ավելի քան 85% արտազատվում է 60օրում,ամբողջական 180 օրում: Ստենտի ջաղերի միջև եղած տրամագիծը 0.77մմ: Աշխատաքային երկարությունը՝ աչ պակաս, քան՝ 140սմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 9մմ, 12մմ,14մմ(2.25մմ-2.75մմ), 15մմ(3.0մմ-4.0մմ), 18մմ, 2,24մմ, 2,68մմ, 3,0մմ, 34մմ, 38մմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ:

Հարցադրում N 2: Հարգելի հանձնաժողով խնդրում ենք 2-րդ չափաբաժնի մասով պարզաբանել՝ եթե առաջարկվող Medtronic ֆիրմայի ապրանքատեսակը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել այն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը ունեցող ապրանքատեսակի կիրառման դեպքում համարժեք կդիտարկվի արդյոք ստորև նշված՝ դեղապատ ստենտի տեխ. բնութագրով ապրանքը, դեղը զոտարոլիմուս, իրենից ներկայացնում է շարունակական չընդհատվող սինուսային հյուսվածք որը հնարավորություն է տալիս խուսափել թե վիրահատության ժամանակ թե հետվիրահատական շրջանում ստենդի հետագա դեֆորմացիայից: Ստենտի նյութը՝ կոբալտ քրոմ, ստենտի նյութի հաստությունը ոչ ավել, քան՝ 0.091մմ, դեղանյութի ավելի քան 85% արտազատվում է 60օրում,ամբողջական 180 օրում: Ստենտի ջաղերի միջև եղած տրամագիծը 0.77մմ: Աշխատաքային երկարությունը՝ աչ պակաս, քան՝ 140սմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 9մմ, 12մմ,14մմ(2.25մմ-2.75մմ), 15մմ(3.0մմ-4.0մմ), 18մմ, 2,24մմ, 2,68մմ, 3,0մմ, 34մմ, 38մմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ:

Պարզաբանում N 1 և N 2: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորումը հիմնավորող

փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև տեխնիկական բնութագրերը, Պատվիրատուի կողմից գնահատվում են դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում: ՀՀ գնումների մասին օրենսդրության համաձայն՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում Ձեր կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում հարցումը կատարվել է դեկտեմբերի 1-ին ժամը 15:07-ին: Պատվիրատուի կողմից պարզաբանում տրամադրելու վերջնաժամկետը սահմանվել է դեկտեմբերի 4-ը մինչև ժամը 14:00-ն:

Վերոգրյալից պարզ երևում է, որ Պատվիրատուն պարզաբանումը ստանալու պահից պետք է կարողանա իրականացնել գործողություն, որի համար Պատվիրատուին օրենքով սահմանված կարգով տրամադրվում է տաս աշխատանքային օր: Հետևապես, Մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում տեխնիկական բնութագրերը կպահանջվեն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում, իսկ դրանք համարժեքությունը, ինչպես նաև ֆունկցիոնալ առումով հնարավորության համարժեքության գնահատումը կիրականացվի վերոնշյալ ժամկետներում, քանի որ գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև 40-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագրի համարժեքության որոշումը ժամկետի առումով անհնար է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Միքայել Ղարիբյանին:

Հեռախոս՝ 011621000(249):

Էլ. փոստ՝ marketing.ysmu8@gmail.com:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան